ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ «ՍԵԲԱՍՏԻԱ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

0065, ք.Երևան, Սեբաստիա 9

հեռ. (+374 10) 74-24-00
էլ.փոստ 15.pol@mail.ru

N° 015 / 68

«20» «06» 2024թ.

«Ագաստ»ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ՝ Գ. Մուրադյանին

Ծանուցում

պայմանագիրը միակոմանի լուծելու մասին

Հարգելի տիկին Մուրադյան

«Սեբաստիա»ԱԿ ՓԲԸ և «Ագաստ»ՍՊԸ-ի միջև 26.02.2024թ. կնքված «ՍԵԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24-9»-4 պայմանագի շրջանակներում «Ագաստ»ՍՊԸ ստանձնել է դեղորայքի մատակարարաման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:Սակայն «Ագաստ»ՍՊԸ-ին 27.05.2024թ-ին պատվեր հայտ է ներկայացվել N4 չաբաժնի/Կլոպիդոգրել 75մգ դեղահաբ/ համար,որը չի մատակարարվել:Պայմանագրի համաձայն ապրանքը պետք է մատակարարվի Պատվիրատուից պատվերը ստանալուց 5 օրյա ժամկետում,սակայն պատվերը չի մատակարարվել: «Ագաստ»ՍՊԸ-ին տրվել է ևս հավելյալ երկու աշխատանքային օր,բայց մինչ օրս ապրանքը չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.04.2017թ թիվ 526-ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայամանագրի 8.9 կետը՝ «Սեբաստիա»ԱԿ ՓԲԸ-ն միակողմանի լուծում է և «Ագաստ»ՍՊԸ-ի միջև 26.02.2024թ. կնքված «ՍԵԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24-9»-4 ծածկագրով պայամանգիրը :

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի կետի 6-րդ ենթակետը՝Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայամանգրով նախատեսված կամ գնման գործնթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը ,որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանմի լուծմանը կամ գնման գործնթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադրեցմանը:

Պայամագիրը միակողմանի կհամարվի լուծված սույան ծանուցումը պատվիրատույի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

Միաժամանակ տեղեկացնում եմ,որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները ,ապա «Ագաստ»ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈՒԿՅԱՆ